ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/25

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 30.04.2021թ.),

«Գենկոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Մ. Եսայանի (լիազորագիր՝ տրված 04.05.2021թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ամբարձիչների և շարժական կայանքների նորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի կողմից 29.04.2021թ. ներկայացված (30.04.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Արտաշես Բաղդասարյան Տիգրանի Ա/Ձ-ն (հետայսու նաև՝ Մասնակից) 29.04.2021թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «ամբարձիչների և շարժական կայանքների նորոգման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2 ծածկագրով գնանշման հարցում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «Արտաշես Տիգրանի Բաղդասարյան» Ա/Ձ-ն և «Գենկոն» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 2.3 կետի համաձայն՝ «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն, մասնավորապես՝ տնօրեն Հրաչ Հայկարամի Գյուրջյանի կողմից Վահե Սամվելի Պողոսյանին տրված լիազորագրում, որպես Հրաչ Հայկարամի Գյուրջյանի անձնագրային տվյալ նշված է անձնագիր...., տրված 18.04.1984թ., 027-ի կողմից:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և տրամադրել մասնակցին շտկման հնարավորություն:

Արդեն www. gnumner.am պաշտոնական տեղեկագրում 23.04.2021թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարության համաձայն տեղեկանում ենք, որ «Գենկոն» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով ընտրված մասնակից:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևայլ կարևոր փաստերը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է եղել անհամապատասխանություն, մասնավորապես՝ տնօրեն Հրաչ Հայկարամի Գյուրջյանի կողմից Վահե Սամվելի Պողոսյանին տրված լիազորագրում որպես Հրաչ Հայկարամի Գյուրջյանի անձնագրային տվյալ նշված է Անձնագիր ...., տրված 18.04.1984թ., 027-ի կողմից:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և տրամադրել մասնակցին շտկման հնարավորություն:

Արդյունքում մասնակցի կողմից ներկայացվել է նոր լիազորագիր ստորագրված արդեն հայտը ներկայացնելու վերջնաժամկետին հաջորդող օրվա ամսաթվով, այն է՝ 15.04.2021թ., հետևաբար հայտի փաստաթղթերը ստորագրվել են 13.04.2021թ., այսինքն

հայտի փաթեթի փաստաթղթերը ստորագրված են եղել այդպիսի լիազորություն չունեցող անձի կողմից:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը ոչ իրավաչափ հաղթող մասնակից է ճանաչել մի ՍՊԸ-ը, որի գնային առաջարկը հայտը ներկայացնելու պահին եղել է ստորագրված նման լիազրություն չունեցող անձի կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը. բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝ պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «ամբարձիչների և շարժական կայանքների նորոգման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Գենկոն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները՝ դադարեցնելու վերաբերյալ»:

Ի լրումն բողոքի Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնվել է ներկայացված բողոքով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել «Արտաշես Տիգրանի Բաղդասարյան» Ա/Ձ-ն և «Գենկոն» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 2.3 կետի համաձայն՝ «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում առկա է եղել անհամապատասխանություն, մասնավորապես՝ տնօրեն Հրաչ Հայկարամի Գյուրջյանի կողմից Վահե Սամվելի Պողոսյանին տրված լիազորագրում որպես Հրաչ Հայկարամի Գյուրջյանի անձնագրային տվյալ նշված է Անձնագիր տրված 18.04.1984թ., 027-ի կողմից:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և տրամադրել մասնակցին հնարավորություն:

Արդեն www. gnumner.am պաշտոնական տեղեկագրում 23.04.2021թ. հրապարակված պայմանագիր կնքելու մասին հայտարարության համաձայն տեղեկանում ենք, որ «Գենկոն» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես Ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով ընտրված

Վերոհիշյալի հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալ լրացուցիչ հիմնավորումները.

Ուսումնասիրելով «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերը՝ պարզ է դառնում, որ մասնակցի գնային առաջարկը և առկա լիազորագիրը ստորագրվել են 2021թ. ապրիլի 13-ին: Վերոհիշյալ փաստաթղթերը հաստատված են նաև էլեկտրոնային թվային ստորագրությամբ 2021թ. ապրիլի 13-ին:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ ներկայացված լիազորագրում առկա է սխալ, մասնավորապես, սխալ են նշված տնօրենի անձնագրային տվյալները, ինչի պայմաններում լիազորագիրը չի կարող դիտարկվել որպես պատշաճ փաստաթուղթ և հավաստել, որ դրանով «Գենկոն» ՍՊԸ-ի տնօրենը լիազորել է Վահե Պողոսյանին իր անունից ստորագրել բոլոր տեսակի փաստաթղթերը:

Վերոհիշյալի հիման վրա՝ գնահատող հանձնաժողովը առաջարկել է «Գենկոն» ՍՊԸ-ին շտկել ներկայացված լիազորագիրը:

«Գենկոն» ՍՊԸ-ի կողմից լիազորագրի շտկումը կատարվել է, դրվել են «Գենկոն» ՍՊԸ-ի տնօրենի անձնագրի ճիշտ տվյալներ, որի արդյունքում «Գենկոն» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

Այս կապակցությամբ գտնում ենք, որ նման շտկված լիազորագիրը չպետք է հիմք հանդիսանար «Գենկոն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու համար, հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:

Այսպիսով, վավեր լիազորագիրը փաստաթուղթ է, որը թույլ է տալիս անհատին գործել մեկ այլ անձի, ընկերության անունից:

Այս առումով, ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք կարող է հանդիսանալ պատշաճ ձևով տրված լիազորագիրը, քանի որ այն միակողմ գործարք է, որը պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի անունից գործելու իրավունք է վերապահում այն պահից, երբ ներկայացուցիչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը և/կամ գործել դրանում սահմանված լիազորություններին

ԼԴ/0423/02/08 քաղ. գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.03.2009 թ. որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ըստ էության հանդիսանալով միակողմանի գործարք՝ վավեր լիազորագիրը լիազորվողի (պարտապանի) մոտ առաջացնում է միայն որոշակի պարտավորություններ, նախ՝ լիազորողի անունից հանդես գալ երրորդ անձանց առջև, երկրորդ՝ կատարել լիազորագրով սահմանված հանձնարարությունը, իսկ լիազորողի (պարտատիրոջ) համար սահմանում է միայն որոշակի իրավունք՝ լիազորվողից պահանջել կատարելու լիազորագրով ստանձնած հանձնարարությունը (պարտավորությունը):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ հայտը, և մասնավորապես գնային առաջարկը, ստորագրելու պահին՝ 13.04.2021թ., հայտի փաթեթը ստորագրած Վահե Պողոսյանը չի ունեցել վավեր լիազորագիր, որի պայմաններում իրավասու կլիներ «Գենկոն» ՍՊԸ-ի անունից կատարել որոշակի գործողություններ, այդ թվում նաև ստորագրեր հայտի փաթեթը: Նման պայմաններում Վահե Պողոսյանը իրավունք չուներ ստորագրելու նաև գնային առաջարկը և ստացվում է, որ «Գենկոն» ՍՊԸ-ի հայտը ստորագրվել է նման իրավասություն չունեցող անձի կողմից (անվավեր լիազորագրի պայմաններում), ուստի գնային առաջարկը անվավեր է:

Ինչ վերաբերում է շտկված լիազորագրին, ապա ակնհայտ է, որ դրանում շտկումը կատարվել է 15.04.2021թ., Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից համապատասխան դիտողություն կատարելուց և շտկում պահանջելուց հետո, ինչը հավաստվում է այն փաստով, որ երկրորդ լիազորագիրը հաստատված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ 15.04.2021թ.:

Նման պարագայում ունենք մի իրավիճակ, երբ 13.04.2021թ. «Գենկոն» ՍՊԸ-ի հայտը, այդ թվում նաև գնային առաջարկը, որը չշտկվող փաստաթուղթ է, ստորագրվել է այդ պահին անվավեր լիազորագրի հետևանքով նման լիազորություն չունեցող անձի կողմից, իսկ լիազորագրում շտկումը կատարվել է միայն երկու օր անց, ինչը 13.04.2021թ. տրված և հայտի փաթեթում առկա լիազորագիրը, որի հիման վրա ստորագրվել է գնային առաջարկը, չի դարձնում վավեր և բավարար «Գենկոն» հայտը բավարար գնահատելու համար: Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք բավարարել «Արտաշես Բաղդասարյան Տիգրանի» Ա/Ձ-ի կողմից 29.04.2021թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոքը»:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոքի քննության նպատակով 06.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոքի շրջանակներում ներկայացվել է բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և հետևյալ գրավոր դիրքորոշումը.

«Ի պատասխան Ձեր 30.04.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/6710-2021 գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2» ծածկագրով ընթացակարգին ի թիվս այլ մասնակցի հայտ է ներկայացրել նաև «Գենկոն» ՍՊԸ-ն: Ներկայացված հայտերի բացման և գնահատման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում բացակայում է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով 3-րդ չափաբաժնի մասով պահանջված հայտի ապահովումը, ինչպես նաև «Գենկոն» ՍՊԸ-ի տնօրեն Հրաչ Հայկարամի Գյուրջյանի կողմից Վահե

Սամվելի Պողոսյանին տրված լիազորագրում (հայտում ներառված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու համար) որպես Հրաչ Հայկարամի Գյուրջյանի անձնագրային տվյալ նշված է Անձնագիր AN0330634 տրված 18.04.1984թ. 027-ի կողմից:

Հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրության 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 16 տարին լրացած քաղաքացու անձնագիրը տրվում է 10 տարի ժամկետով: Ժամկետանց անձնագրերն անվավեր են և ենթակա են փոխանակման՝ սահմանված կարգով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և առաջարկել մասնակցին սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: «Գենկոն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոքի քննության նպատակով 06.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոքի շրջանակներում ներկայացվել է գրավոր միջնորդություն վերջինիս որպես կողմ ներգրավելու վերաբերյալ, որը բողոքի քննության նպատակով 06.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի ընթացքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից բավարարվել է:

«Գենկոն» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ձեր վարույթում է գտնվում 29.04.2021թ «Արտաշես Բաղդասարյան Տիգրանի» ԱՁ-ի կողմից ներկայացված բողոքը, որով վերջինս խնդրել է պարտավորեցնել ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-

21-2/2 գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Գենկոն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները դադարեցնելու վերաբերյալ:

06.05.2021թ հրավիրված բողոքի քննության նիստին «Գենկոն» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացուցիչ Մանուշ Եսայանի կողմից ներկայացվել է միջնորդություն որպես կողմ ներգրավելու վերաբերյալ, որից հետո նիստի ընթացքում Ընկերությունը ներկայացրել է իր բանավոր առարկությունները:

Սույնով վերհաստատելով Ընկերության կողմից արդեն իսկ հնչեցված բանավոր դիտարկումները ստորև ներկայացնում ենք նաև գրավոր առարկաթյուններ:

Նախ և առաջ անհրաժեշտ է արձանագրել, որ լիազորագիրը կամային միակողմանի գործարք է, որով մի կողմը մյուսին տալիս է իրավունք գործելու ի շահ լիազորողի և վերջինիս անունից: Միևնույն ժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածով սահմանված են լիազորագրին ներկայացվող պահանջները, որտեղ նշված չէ՝ ինչպիսի տվյալներ պետք է պարունակի լիազորագիրը: Հատկանշական է, որ որևէ այլ իրավական ակտում չկա սահմանում կամ սպառիչ ցանկ՝ ինչպիսի անձնական տվյալներ պետք է պարունակի լիազորագիրը:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ 3-րդ մասի համաձայն՝ 3. Ընկերության գործադիր մարմինը՝ բ) տալիս է լիազորագրեր՝ ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրել:

Սույն դեպքում Ընկերությունը ի դեմս գործադիր մարմնի ղեկավարի հաշվի առնելով իրավական ակտերի պահանջները 2021թ ապրիլի 13-ին լիազորել է քաղաքացի Վահե Սամվելի Պողոսյանին գործելու Ընկերության անունից՝ դրանում նշված լիազորությունների շրջանակներում:

Հարկ ենք համարում առանձնակի ընդգծել այն էական հանգամանքը, որ Ընկերությունը որևէ կերպ չի վիճարկում Պողոսյանին տրված լիազորությունները, չի հայտարերել/հայտարում լիազորագրում նշված անձի մոտ լիազորագրով սահմանված գործողություններ կատարելու կամ իրավունք իրացնելու իրավունքի դադարման մասին, հետևաբար հարց է առաջանում՝ արդյոք որևէ երրորդ անձ իրավասու է ազդել կամ թելադրել լիազորողին՝ ում և ինչպես պետք է վերջինս լիազորի կամ կասկածի տակ դնի իրավաբանական անձի կողմից տրված լիազորագրով անձին լիազորելու ցանկությունը,

քանի որ ինչպես արդեն նշվել է լիազորագիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով հանդիսանում է միակողմանի գործարք, որն իր հերթին հիմնված է լիազորողի կամահայտնության ազատության սկզբունքի վրա, հակառակ պարագայում ստացվում է, որ սույն դեպքում բողոք բերող անձը վիճարկում է լիազորագիր տվողի կամքը, որն իհարկե անտրամաբանական է:

Ինչպես արդեն իսկ նշել ենք, որ ՀՀ գործող իրավական ակտերով չի սահմանվում լիազորագրում նշվող պարտադիր ցանկ, հետևաբար հարց է առաջանում՝ արդյոք լիազորողի անձնագրի տրման ամսաթվի թերի նշումը կամ չնշելը կամ սխալ նշելը ինքնին հանգեցնում է լիազորվող անձի լիազորություն չունենալուն կամ առհասարակ լիազորագրի անվավերությանը, այն պարագայում երբ նույն 13.04.2021թ տրված և նույն օրը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լիազարագրում առկա են Վահե Պողոսյանի նույնականացման քարտի ամբողջական տվյալները, անձնագրի սերիան և համարը, ինչպես նաև լիազորող իրավաբանական անձի կնիքը, տնօրենի ստորագրությունը, տնօրենի անձնագրի սերիան և համարը:

Այսպես, քանի որ լիազորագիրը հանդիսանում է անձի անունից և ի շահ լիազորողի գործելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, ապա սույն դեպքում Վահե Պողոսյանը գործել է Ընկերության անունից իրեն տրված իրավասությունների սահմաններում և որևէ կերպ դուրս չի եկել լիազորագրում նշված լիազորություններից՝ ներկայացրել է մրցույթին մասնակցելու հայտ՝ անհրաժեշտ փաստաթղթերով, ստորագրել է դրանք նաև էլեկտրոնային ստորագրությամբ:

Միևնույն ժամանակ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ 13.04.2021թ հայտին կից լիազորագրում տեղ գտած թերությունը ընդամենը տեխնիկական վրիպակ է: Մասնավորապես Ընկերության տնօրենը լրացնելով իր անձնագրային տվյալները, անձնագրի տրման ամսաթվի փոխարեն թյուրիմացաբար նշել է իր ծննդյան ամսաթիվը, այն է 18.04.1984թ (տես՝ կից ներկայացված անձնագրի պատճենը), սակայն մնացած բոլոր տվյալները՝ թե' լիազորողի, թե' լիազորվողի ճիշտ են, լիազորագիրը հաստատված է ընկերության կնիքով և տնօրենի ստորագրությամբ, դրանում հստակ նշված է նաև լիազորությունների շրջանակը, հետևաբար թե' գնահատող հանձնաժողովի մոտ, թե' ցանկացած երրորդ անձի մոտ պարզապես չի կարող առաջանալ որևէ խնդիր լիազորողին և/կամ լիազորվողին նույնականացնելու հետ, ինչպես նաև անձին տրված լիազորությունների վերաբերյալ:

Ավելին, հակադարձելով բողոք բերողի այն պնդմանը՝ թե մրցույթ կազմակերպող կողմը լիազորագիրը համարել է անվավեր, հայտնում ենք, որ մասնավորապես 14.04.2021թ ժամը 12:40 կազմած թիվ 3 արձանագրությունում չկա որևէ նշում՝ լիազորագրի անվավեր լինելու մասին: Գնահատող հանձնաժողովը ընդամենը մատնաշել է լիազորագրում առկա թերությունը և ժամանակ է տրամադրել շտկելու այն, քանի որ անվիճելի է, որ անձը չէր կարող ունենալ 1984թ «AN սերիայով» և «027»-ի կողմից տրված Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր և 12.04.2021թ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցեր իրավաբանական անձ, իսկ լիազորագորում տեղ գտածը ընդամենը տեխնիկական վրիպակ է, որը չի հանգեցնում լիազորվող անձի լիազորությունների և լիազորագրի անվավերությանը:

Այսինքն պնդում ենք, որ հայտին կից ներկայացված լիազորագրում ընդամենը տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, որը չի կարող և չի հանգեցնում լիազորագրի անվավերությանը, հայտ ներկայացնելու ժամանակ Ընկերության անունից փաստաթղթեր ստորագրած անձը իրավասու էր և լիազորված գործել ընկերության անունից, ընկերությունը օրենքով և գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված կարգով վերացրել է հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունները, ուստի և հանձաժողովը կայացրել է իրավաչափ որոշում:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ 15.04.2021թ Ընկերության կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված 13.04.2021թ տրված լիազորագիրը ևս համարվում է պատշաճ, իսկ էլեկտրոնային ստորագրության և լիազորագրի տրման ամսաթվերի անհամապատասխանությունը կապված է միայն նրա հետ, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526 Ն որոշման 41-րդ կետի համաձայն հայտը և բոլոր փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն էլեկտրոնային ստորագրությամբ, ինչն էլ կատարել է Ընկերությունը: Այսինքն, էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր հաստատելու ընթացակարգը որևէ աղերս չունի լիազորագրի վավերականության հետ, քանի որ նախ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված չէ, որ լիազորագիրը պետք է հաստատվի էլեկտրոնային հետո, էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթերի բխում է կառավորության վերը նշված կարգից:

Ավելին, խնդիրը քննարկելով բողոք բերողի այն պնդումների սահմաններում, որտեղ վերջինս հայտնում է, որ 13.04.2021թ հայտ ներկայացնելու պահին հայտ ներկայացնող, գնային առաջարկ կատարող անձի ներկայացուցիչը՝ Վահե Պողոսյանը չի ունեցել նման

լիազորություն, քանի որ չի ունեցել վավեր լիազորագիր՝ իրականությանը չի համապատասխանում:

Այսպես, Ընկերությունը հայտ է ներկայացրել 13.04.2021թ, այսինքն, իրավահարաբերության ծագման պահը սույն 2021թ ապրիլի 13-ն է, հետևաբար անհրաժեշտ է պարզել՝ արդյոք 13.04.2021թ. Ընկերությունը լիազորել է Վահե Պողոսյանին հանդես գալու Ընկերության անունից և իրականացնելու որոշակի գործողություններ կապված հայտարարված մրցույթի հետ, թե ոչ:

Նշվածի կապակցությամբ պնդում ենք, որ այո', Ընկերությունը 2021թ ապրիլի 13-ին լիազորել է Վահե Պետրոսյանին հանդես գալ գնման գործընթացում և իրականացել որոշակի գործողություններ, ինչը հաստատվում է 13.04.2021թ թվագրված և պատշաճ ձևով հաստատված լիազորագրով, որը ներկայացվել է գնահատող հանձանժողովին 15.04.2021թ., որն էլ այդ օրը հաստատվել է էլեկտրոնային ստորագությամբ: Այսինքն, բողոք բերողի այն պնդումները, որ 13.04.2021թ՝ իրավահարաբերության ծագման պահին Ընկերության անունից հանդես եկած և հայտ ներկայացրած անձը չի ունեցել նման լիազորություն իրականությանը չեն համապատասխանում և ակնհայտ անհիմն են:

Շարունակելով նշված պնդումը, հայտնում ենք, որ եթե անգամ 13.04.2021թ տեխնիկական վրիպակով հայտին կից ներկայացված լիազորագիրը պայմանական համարենք անվավեր, ապա միևնույն է Ընկերությունը ներկայացրել է նույն՝ 13.04.2021թ տրված վավեր լիազորագիր:

Կրկին անգամ անդրադառնալով 13.04.2021թ տրված տեխնիկական վրիպակով լիազորագրի վերաբերյալ Բողոք բերող կողմի այն հայտարարություններին՝ թե լիազորագիրը ոչ վավեր է, այսինքն անվավեր է, հայտնում ենք, որ վերջինս այդպես էլ չի մատնանշում՝ թե որ իրավական ակտի ուժով է սահմանված լիազորագրի՝ անձնագրային տվյալի սխալ նշումի հիմքով դրա անվավերությունը:

Միևնույն ժամանակ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 324-րդ հոդվածով սահմանված է լիազորագիրը դադարելու հիմքերը. Լիազորագրի դադարելը

1. Լիազորագրի գործողությունը դադարում է, եթե՝

1) լիազորագրի ժամկետը լրացել է.

2) իրականացվել են լիազորագրով նախատեսված գործողությունները.

3) լիազորագրողը վերացրել է այն.

4) անձը, ում տրված է լիազորագիրը, հրաժարվել է.

5) դադարել է այն իրավաբանական անձը, որի անունից տրվել է լիազորագիրը.

6) դադարել է այն իրավաբանական անձը, որի անունով տրվել է լիազորագիրը.

7) մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ով տվել է լիազորագիրը.

8) մահացել է կամ անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվել այն անձը, ում տրվել է լիազորագիրը:

2. Լիազորագիր տվող անձը կարող է ցանկացած ժամանակ վերացնել լիազորագիրը կամ վերալիազորումը, իսկ անձը, ում տրված է լիազորագիրը, հրաժարվել դրանից: Այդ իրավունքներից հրաժարվելու մասին համաձայնությունն առոչինչ է:

3. Նոտարական կարգով վավերացված լիազորագիրը վերացնելը կամ լիազորագրից հրաժարվելը կատարվում է նոտարական կարգով:

Քննարկվող դեպքում առկա չեն նաև վերը մատնանշված լիազորագրի դադարման հիմքերից որևիցե մեկը, ուստի 2021թ. ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2 ծածկագրով հայտարարված մրցույթի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված ողջ փաթեթը ճիշտ է և իրավաչափ:

Հաշվի առնելով 06.05.2021թ հրավիրված նիստին հայտնած մեր բանավոր դիրքորոշումը, ինչպես նաև սույն առարկությունում նշված հիմքերը պնդում ենք, որ հայտ ներկայացնելու պահին Ընկերության անունից հանդես եկած անձը ունեցել է պատշաճ կերպով լիազորությունները հավաստող փաստաթուղթ՝ լիազորագիր, ուստի ներկայացված բողոքն ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման»:

«Գենկոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ապահովել է իր մասնակցությունը ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոքի քննության նպատակով 06.05.2021թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստին և հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>4.ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ամբարձիչների և շարժական կայանքների նորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով

հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Գենկոն» ՍՊԸ-ն և Արտաշես Բաղդասարյան Տիգրանի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ «Գենկոն» ՍՊԸ-ի տնօրեն Հրաչ Հայկարամի Գյուրջյանի կողմից Վահե Սամվելի Պողոսյանին տրված լիազորագրում, որպես Հրաչ Հայկարամի Գյուրջյանի անձնագրային տվյալ նշված է անձնագիր AN0330634, տրված 18.04.1984թ., 027-ի կողմից:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 14.04.2021թ. կասեցրել է նիստը և առաջարկել «Գենկոն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գենկոն» ՍՊԸ-ն ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

5. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-4-րդ չափաբաժինների մասով «Գենկոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի 29.04.2021թ. բողոքը՝ կից լրացմամբ և փաստաթղթերով, ԳԲՔԱ-ՆԳ-2021/25 բողոքի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստաթղթերը, «Գենկոն»

ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ եթե հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ), ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետով սահմանվում է, որ եթե սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ), ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է

նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ամբարձիչների և շարժական կայանքների նորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Գենկոն» ՍՊԸ-ն և Արտաշես Բաղդասարյան Տիգրանի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գենկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին, մասնավորապես՝ «Գենկոն» ՍՊԸ-ի տնօրեն Հրաչ Հայկարամի Գյուրջյանի կողմից Վահե Սամվելի Պողոսյանին տրված լիազորագրում, որպես Հրաչ Հայկարամի Գյուրջյանի անձնագրային տվյալ նշված է անձնագիր AN0330634, տրված 18.04.1984թ., 027-ի կողմից:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, 14.04.2021թ. կասեցրել է նիստը և առաջարկել «Գենկոն» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Գենկոն» ՍՊԸ-ն ներկայացրել է պահանջվող շտկումները, որոնք համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 1-4-րդ չափաբաժինների մասով «Գենկոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Այսպիսով, արձանագրում եմ, որ Մասնակիցը ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«*«Գենկոն» ՍՊԸ-ի հայտը, և մասնավորապես գնային առաջարկը, ստորագրելու պահին՝ 13.04.2021թ., հայտի փաթեթը ստորագրած Վահե Պողոսյանը չի ունեցել վավեր լիազորագիր, որի պայմաններում իրավասու կլիներ «Գենկոն» ՍՊԸ-ի անունից կատարել որոշակի գործողություններ, այդ թվում նաև ստորագրեր հայտի փաթեթը: Նման պայմաններում Վահե Պողոսյանը իրավունք չուներ ստորագրելու նաև գնային առաջարկը և ստացվում է, որ «Գենկոն» ՍՊԸ-ի հայտը ստորագրվել է նման իրավասություն չունեցող անձի կողմից (անվավեր լիազորագրի պայմաններում), ուստի գնային առաջարկը անվավեր է:*

Ինչ վերաբերում է շտկված լիազորագրին, ապա ակնհայտ է, որ դրանում շտկումը կատարվել է 15.04.2021թ., Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից համապատասխան դիտողություն կատարելուց և շտկում պահանջելուց հետո, ինչը հավաստվում է այն փաստով, որ երկրորդ լիազորագիրը հաստատված է էլեկտրոնային թվային ստորագրությամբ 15.04.2021թ.:

Նման պարագայում ունենք մի իրավիճակ, երբ 13.04.2021թ. «Գենկոն» ՍՊԸ-ի հայտը, այդ թվում նաև գնային առաջարկը, որը չշտկվող փաստաթուղթ է, ստորագրվել է այդ պահին անվավեր լիազորագրի հետևանքով նման լիազորություն չունեցող անձի կողմից, իսկ լիազորագրում շտկումը կատարվել է միայն երկու օր անց, ինչը 13.04.2021թ. տրված և հայտի փաթեթում առկա լիազորագիրը, որի հիման վրա ստորագրվել է գնային առաջարկը, չի դարձնում վավեր և բավարար «Գենկոն» հայտը բավարար գնահատելու համար»:

Միաժամանակ արձանագրում եմ, որ բողոքաբերի կողմից հայտնած վերոնշված դիրքորոշմանն ի պատասխան՝ «Գենկոն» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«*Խնդիրը քննարկելով բողոք բերողի այն պնդումների սահմաններում, որտեղ վերջինս հայտնում է, որ 13.04.2021թ հայտ ներկայացնելու պահին հայտ ներկայացնող, գնային առաջարկ կատարող անձի ներկայացուցիչը՝ Վահե Պողոսյանը չի ունեցել նման*

լիազորություն, քանի որ չի ունեցել վավեր լիազորագիր՝ իրականությանը չի համապատասխանում:

Այսպես, Ընկերությունը հայտ է ներկայացրել 13.04.2021թ, այսինքն, իրավահարաբերության ծագման պահը սույն դեպքում 2021թ. ապրիլի 13-ն է, հետևաբար անհրաժեշտ է պարզել՝ արդյոք 13.04.2021թ. Ընկերությունը լիազորել է Վահե Պողոսյանին հանդես գալու Ընկերության անունից և իրականացնելու որոշակի գործողություններ կապված հայտարարված մրցույթի հետ, թե ոչ:

Նշվածի կապակցությամբ պնդում ենք, որ այո', Ընկերությունը 2021թ. ապրիլի 13-ին լիազորել է Վահե Պետրոսյանին հանդես գալ գնման գործընթացում և իրականացել որոշակի գործողություններ, ինչը հաստատվում է 13.04.2021թ. թվագրված և պատշաճ ձևով հաստատված լիազորագրով, որը ներկայացվել է գնահատող հանձանժողովին 15.04.2021թ., որն էլ այդ օրը հաստատվել է էլեկտրոնային ստորագրությամբ: Այսինքն, բողոք բերողի այն պնդումները, որ 13.04.2021թ.՝ իրավահարաբերության ծագման պահին Ընկերության անունից հանդես եկած և հայտ ներկայացրած անձը չի ունեցել նման լիազորություն իրականությանը չեն համապատասխանում և ակնհայտ անհիմն են»:

Այսպիսով, վերը նշված փաստերով պայմանավորված, ինչպես նաև ուսումնասիրելով գործով առկա նյութերը՝ հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու՝ Օրենսգիրք) 289-րդ հոդվածի համաձայն՝ ***գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն,*** փոփոխելուն կամ դրանց դադարելուն:

Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքները կարող են լինել երկկողմ կամ բազմակողմ (պայմանագիր), ինչպես նաև՝ միակողմ, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ օրենքին, այլ իրավական ակտերին կամ կողմերի համաձայնությանը համապատասխան ***միակողմ գործարք կնքելու համար անհրաժեշտ և բավարար է մեկ կողմի կամքի արտահայտությունը:***

Օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***մեկ անձի (ներկայացուցչի) կողմից ուրիշ անձի (ներկայացվողի) անունից <u>լիազորագրի (...) վրա հիմնված լիազորությունների ուժով կնքված գործարքը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ստեղծում, փոփոխում ու դադարեցնում անմիջականորեն ներկայացվողի համար</u>*** <u>(...):</u>

Օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար (...):

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ:***

Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: ***Եթե լիազորագրում ժամկետ նշված չէ, ապա այն ուժը պահպանում է տալու օրվանից*** մեկ տարվա ընթացքում:

Լիազորագիրը, որում նշված չէ դրա կատարման տարին, ամիսը և ամսաթիվը, առոչինչ է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորական իրավահարաբերություններն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կապված են որոշակի գործողություններ կատարելու կամ դրանց կատարումից ձեռնպահ մնալու հետ:

Պարտավորական հարաբերությունների առաջացման հիմք են հանդիսանում նաև միակողմ գործարքները, որոնց միջոցով քաղաքացիական իրավունքի սուբյեկտը միակողմանի կամահայտնությամբ տնօրինում է իր սուբյեկտիվ իրավունքը կամ ստանձնում է սուբյեկտիվ պարտականություն՝ դրանով իսկ պարտավորական հարաբերության մյուս կողմին օժտելով համապատասխան սուբյեկտիվ իրավունքով:

Պարտավորական իրավահարաբերությունների ծագման հիմք է հանդիսանում նաև լիազորագիրը, քանի որ այն միակողմ գործարք է, որը ներկայացուցչին պարտավորեցնում է գործել դրանում սահմանված լիազորությունների շրջանակում, և ներկայացվողի անունից գործելու իրավունք է վերապահում այն պահից, երբ ներկայացուցիչը համաձայնվում է ստանալ լիազորագիրը և/կամ գործել դրանում սահմանված լիազորություններին համապատասխան:

Այսպիսով՝ Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ եթե հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը, ***ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:***

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 2-րդ կետի 2.6-րդ ենթակետի համաձայն՝ սույն հրավերով նախատեսված՝ ***մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է*** դրանք

ներկայացնող անձը կամ ***<u>վերջինիս լիազորված անձը</u>*** (այսուհետ՝ գործակալ), ***<u>ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:</u>***

Վերը նշված կարգավորումները ցույց են տալիս, որ եթե գնման գործընթացին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր:

Ընդ որում Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում <u>մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Կարգի 42-րդ կետով սահմանվում է, որ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է</u>***:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Պատվիրատուի կողմից տրամադրված լիազորագրերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ «Գենկոն» ՍՊԸ-ն, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում ներկայացրել է «Գենկոն» ՍՊԸ-ի տնօրեն Հրաչ Գյուրջյանի կողմից տրված պատշաճ լիազորագիր՝ թվագրված 13.04.2021թ.-ին, որը որպես արձանագրված անհամապատասխանության շտկում ներկայացվել է գնահատող հանձնաժողովին 15.04.2021թ. հաստատված Վահե Պողոսյանի էլեկտրոնային ստորագրությամբ:

Վերը նշվածից հետևում է, որ 13.04.2021թ. տրված լիազորագրով «Գենկոն» ՍՊԸ-ի տնօրեն Հրաչ Գյուրջյանի և լիազորված անձ Վահե Պողոսյանի միջև Ընթացակարգին մասնակցելու հայտի փաստաթղթերը ստորագրելու պահին ծագել են պարտավորական հարաբերություններ, այն է՝ 13.04.2021թ.-ին Վահե Պողոսյանը պարտավորվել է գործել լիազորագրով սահմանված լիազորությունների շրջանակում, և «Գենկոն» ՍՊԸ-ի անունից

կատարել որոշակի գործողություններ, այդ թվում նաև՝ ստորագրել Ընթացակարգին ներկայացվող հայտը, հետևաբար գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 42-րդ կետի համաձայն՝ բավարար գնահատելով «Գենկոն» ՍՊԸ-ի հայտը, այն հիմքով, որ վերջինիս կողմից ներկայացվել է Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան պահանջվող շտկումը, գործել է իրավաչափ:

Նման պայմաններում գտնում, եմ, որ Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի բողոքն ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Արտաշես Բաղդասարյան Տիգրանի կողմից 29.04.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**